


ՔԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՊԱՏՈՒՄ
Տարեկան գին և Պոստոյն 8 ՄԷԸ
Չ գաւառաց 40 ՄԷԸ
Վեցամեայ և Պոստոյն 4 ՄԷԸ
Չ գաւառաց 5 ՄԷԸ
Եւրոպայի բերքի գին 60 փրկ
Յանուարի տոգը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ անգամներու կրկնայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՏՈՒՄ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 24 ՕԿՏՈՍՏՈՍ

ՔԱՆԱԿԱՆ

Սպանիոյ կառավարութիւնը ծան-
շելու խնդրոյն մէջ Ռուսիոյ ցոյց տը-
ւած անհամաձայնութիւնը՝ Գերմա-
նիոյ դիւանագիտութեան հարուած
մ'ըջարով՝ բնականաբար չէր կրնար
ուշադրութենէ փրկուիլ:

Մինչդեռ համայն եւրոպայայն-
աբն հաւատացած էր թէ Ռուսիա և
Գերմանիա միեւնոյն աշխարհավարա-
կան նպատակներով կապուած և սեր-
տիւ միացած էին, այս անհամաձայ-
նութիւնն տեսնուեցաւ, որ այդ եր-
կու տերութիւնք տարբեր նպատակ-
ներու կը դիմեն, իւրաքանչիւրն
իր յատուկ գիտումն ու աշխարհա-
գիտութիւնն ունի, և միայն այն խնդ-
րոց մէջ կը միանան, ուր երկուքն
ալ հաւասար շահ ունին:

Պէրսիէն անդղիական Մօրնիկի-
նոսթ լրագրին գրուած նամակ մը՝
Ռուսիոյ բռնած ընթացքին պատճա-
ռն յայտնէ կը բացատրէ:

«Երեք կայսերաց վերջին ժամա-
նակներս ըրած տեսակցութեանց մէջ
որոշուած էր որ Եւրոպական մեծ
խնդրոց վրայ կանխաւ իրարու հետ
խորհրդակցին և համաձայնութեամբ
որոշում ընեն: Արդ՝ կերելի որ ըս-
տանիական խնդրոյն մէջ Գերմանիա
ինքնորոշաբար վարուելով Ռուսիոյ
զգացումը վիրաւորեց: Ասկէց զատ
նկատուեցաւ արժանի է որ Պրիւս-
սիէն մէջ զինուորական դեպարտա-
մէնտը մը գումարներու առաջարկ-
ութիւնը, զոր Ռուսիա ըրած էր,
Ֆրանսիոյ քննադատութիւն չգտաւ մեծ
տերութիւններէն ինչպէս նաև Գեր-
մանիայէն: այս պատճառաւ Ռուսիա
ալ Սպանիական խնդրէն վրէժ ա-
ռաւ:»

Ասկէց կը հասկցուի որ եւրոպա-
կան խնդրոց լուծման մասին երեք
կայսերաց մէջ գոյացած համաձայ-
նութիւնն աւրուելու վտանգի մէջ:

Չինաստանի ու Ճաբոնի կառա-
վարութեանց մէջ այս օրերս ծանր
գիծում լինելու մը ծագած է, որ ըստ իս-
մանայն հաւանականութեամբ պատե-
րազմով պիտի լուծուի:

Գիտութեան խնդրը Յօրմոզ ա-
նուն մեծ կղզի մ'եղած է, որ Չինաս-
տանի և ֆիլիպպինացի կղզեաց մէջ
տեղը կը գտնուի:

Ասկէց քանի մ'ամիս առաջ Ճա-
բոնցի նաւ մը յիշեալ կղզեաց առ-
ջէ կտրելով կղզոյն բնակիչները՝ որք
փայրելի են գրեթէ, խրեալ նաւուն
մէջ գտնուած մարդոց չորսը բար-
բարտական տնջութիւններ ի գործ
դրին:

Ճաբոնի կառավարութիւնը Չի-

նաստանի կառավարութեան դան-
դաւորով հատուցած պահանջեց:
Չինաստանի կառավարութիւնն ալ,
ինչպէս որ Եւրոպական տերութեանց
ալ նմանօրինակ առիթներու մէջ յայ-
տարարած է, պատասխան տուաւ
թէ յիշեալ կղզին իւր իշխանութեան
ներքէ չըլլալով, ինք չէր կրնար պա-
տասխանատու ըլլալ կղզեացոց գոր-
ծերուն:

Ասոր վրայ Ճաբոնի կառավա-
րութիւնն ալ որոշեց նաւախուժ մը
զրկելով կղզին գրաւել և անոր հա-
րաւային արեւմտեան ծայրը բերդ մը
շինելով զօրք դնել, որպէս զի իւր
առեւտրական նաւերը վտանգի ժա-
մանակ հոն ապաստան և շրջապա-
նութիւն գտնեն:

Այս բանը Չինաստանի կառավա-
րութեան ցատու մը գրգռելով՝ պա-
հանջեց Ճաբոնի կառավարութեանէն
որ եւ քաջալի յիշեալ կղզիէն՝ նա
ալ մերժողական պատասխան տուաւ:
Ասոր վրայ երկու կողմէն պատերազ-
մի պատրաստութիւն կը լլայ:

Լոնտոնցի Մանչեսթըրի Կուսու-
տիան լրագրին գրուած նամակ մը
կրնէ թէ Չինաստանի և Ճաբոնի
գիծումը իւր ազդեցու-
թիւնն զգալի կուտայ Եւրոպական վա-
ճառականութեան մի կարեւոր ճիւ-
ղին, այն է պատերազմական միջերաց
վերաբերեալ ճիւղին: Արժանահա-
ւատ աղբիւրէ կիմանում թէ Չինաս-
տանի կառավարութեան գործակալ-
ներ Գերմանիայէն Գրուել թնդա-
նօթիկը և Անգլիայէն ալ 10000 լի-
րայի արժեքով թեմալ վաճառք գնե-
րն: Չինաստանի ու Ճաբոնի հետ տ-
ուաւոր ունեցող անձինք մեծ վա-
խի մէջ են: Կը խորհին որ եթէ Չի-
նաստան յաղթող ելնէ, հետեւեալք
գէշ կը լլայ Եւրոպացոց համար, ո-
րովհետեւ ամենն ալ կը վաճառէ Չինաս-
տանէն:

Վերջապէս, ինչ որ ալ ըլլայ պա-
տերազմին վախճանը, Արեւելոյ մէջ
մեծ փոփոխութիւններ յառաջ պի-
տի բերէ: Բարի թէ չար, Ճաբոնցոց
յաղթելէն կամ յաղթուելէն կախու-
մըն ունի:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պրիւսի 3 սեպտ.

Մեծանի յաղթութեան տարեդարձին
տօնը խիստ չքեղ եղաւ: Կայսրը՝ յաղթո-
ցաց յիշատակին համար կառուելիք
կոթողին առաջին քարը դրուելուն ներ-
կայ գտնուեցաւ:

Միջեր 2 սեպտ.

Պրիւսիէն Լամպր Վիտենբը Երկա-
թուղոյն արտօնութեան՝ Պէրմացի սե-
ղանաւորաց խումբ մ'ալ հարկելին 40 բա-
ժանորք եղաւ: Պաղղիացի սեղանաւորաց
հետ ալ բանակցութիւն կը լլայ:

Պ. Թրիւր րին անպարտ արձակող

Նոյնական դատարանի դատաւորները
փոխուեցան:

Փարիզ 3 սեպտ.

Մնացուն յանձնած ողովոյ այս աւուր
նախն մէջ օրինաւորակեց բողոքելին
Մատրիի կառավարութեան ճանչուելուն
դէմ: Տեղադրուած պատասխանեց թէ
տերութիւններէն շատերն յիշեալ կառա-
վարութիւնը ճանչելով, Գաղղիա ալ եւրո-
պական ներդաշնակութեան հետեւեցաւ:

Անգլային ժողովոյ պակաս անդամաց
ընտրութիւններն հաւանականաբար դալ
ամոց մէջ պիտի կատարին:

Հոսմ 3 սեպտ.

Պ. Տեղա խոստացաւ պաշտպանել ըզ
Պ. Մինիկթիի հետեւաբար նախարարաց
փոփոխութեան խնդիրը վերջացաւ:

Մատրի 2 սեպտ.

Քարտեանը հրաժիգ աւուրեր կար-
ձակեն Բիւյսթրոյի վրայ:

Լոնտոն 2 սեպտ.

Պ. Բոն. 44 1/4
Իսի 4865—
» 4869 56 1/2
» 4874 66
» 4872 80
Անգլ. Բոն. 92 3/4
Օսմ. Նոր փոխառութիւն 52 7/8

Ի. Վիլլուր 2 սեպտ.

Բաւարի Միտիկ—Օրդէան 8 1/8—1/4
» Ֆայր Տօլէրան 5 1/8—1/4
Դալիւս 42000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արաքսի գործոց նախարար Վը-
սեմ. Արիֆի փաշան գալ շաբթու Գը-
րըմ պիտի ելլայ վեհ. Սուլթանին
կողմէ Ռուսաց կայսրը բարեկրու:

Վեհ. Սուլթանը կոտանդնուպոլ-
սոյ Գաղաքապետ վսեմ. Գաւարի պէ-
շին ամսական տաւան հաղար զըշ ա-
ւելցուց:

Ելուստից նախարարութիւնը կալ-
ւածական տրոց հաւաքման եղանակն
որոշելու և ան յապաղ գործադրու-
թեան սիսելու համար յատուկ յանձ-
նաժողով մը կազմեց:

Երեւոյթի օրն յիշեալ յանձ-
նաժողովն առաջին նիստ մ'ըրաւ,
բայց որոշում մը դեռ չկրցաւ ընել:

Աւստրո—Հունգարիոյ կառավա-
րութիւնը 1873ի Տիեզերական ար-
ուեստահանդէսին առթիւ հինգա-
կան շքադրամ զրկեց վսեմ. Կազէմ
փաշային, Ռուսան էֆէնդիին և համ-
տի պէշին:

Եգիպտոսի Բարձր. Խալիվ վսեմ.
Աբրահամ պէշի վրայ ունեցած վրա-
տահութեան և սիրոյն նոր ապացոյց
մը տալ ուղերով՝ գեղեցիկ շոգենա-
ւակ մը զրկեց անոր: Այս իշխանա-
կան ընծայն Խալիվին անձնական շո-
գենաւաններէն մէկուն մէջ գրուած Կ-
Պօլիս հասաւ այս շաբթու:

ՔԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՊԱՏՈՒՄ
Գաւառաց քաջած լրագրաց ճանրու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Չինիլի խան, Մատրի գրասեն-
եակը:
Համար ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

Ելուստից նախարարութիւնը Բու-
մէլի երկաթուղեաց բաժիններուն
մինչև հիմա վիճակահանութեամբ ե-
լած թիւերը զատ տեսարակով մը
տղել տուաւ, որպէս զի ժողովուրդն
արդէն ելած թիւերու Բո-օմէններ
վաճառող ընկերութեանց ոմանց խա-
բէութեան զոհ չըլլայ:

Սիւլվիթի ու Չորլուէն գրուած
նամակներ կը ծանուցանեն թէ Չէր-
քէզները նորէն ասպատակութեան
երեւ են Չօրլուի, Սիւլվիթի և Չա-
թալայի կողմերը: Տուարներ գող-
նալէ և ուրիշ աւարառութիւնները
նկէզ դատ, ճանապարհորդաց վրայ
ալ կը յարձակին և կը կոտորեն:

Բօլիշինէլ անուն դաւեչտական
թերթը Մէհմուայը Մէարիֆի տնօ-
րէն Սարաֆեան Ալէքսան էֆէնդիին
դէմ նախադատական յօդուած մը հը-
րատարակած ըլլալով, Ալէքսան է-
ֆէնդիին դատ բայաւ Բօլիշինէլի
խմբագիր Պ. Թէհապոր ֆառապի դէմ
և հինգ շաբթի օրը պատժական ա-
տենին ներկայացան:

Պ. Թ. Բառապ յայտնեց թէ ինքն
ը. Սարաֆեան կատարելապէս պատ-
ւաւոր անձ կը ծանչէ, և թէ Բօլիշի-
նէլ ոչ թէ անոր անձին՝ այլ լրագրին
դէմ գրած էր, և աւելցուց թէ Պ.
Սարաֆեանի անունը բնաւ չկայ Մէհ-
մուայը Մէարիֆի մէջ, այլ Խամթ
ստորագրութիւնը միայն կայ:

Սարաֆեան էֆէնդիին հերքեց
Պ. Թ. Բառապին այս յայտարարու-
թիւնները, և շնայոց հաստատել թէ
այն փառահամբաւութիւններն իրեն
ուղղեալ էին, որովհետեւ Մէհմուայը
Մէարիֆի անօրէնն ինք է:

Վիճաբանութիւնն երկարելով,
գատին շարունակութիւնն յառաջի-
կայ երկուշաբթի աւուր մնաց:

Կ. Պօլիս գտնուող Խալապի մը,
ճիւղերէն Բիշի անուն, Ալէքսանդ-
րիա երթալ ուղերով, բայց չողգնա-
ւի վճարելու ստակ չունենալով, կո-
րոյէ քաղելով ելլալ, և վերջապէս
158 օրէն Ալէքսանդրիա կը հասնի:

Ասկէց քանի մ'օր առաջ Գարթա-
լի մօտակայ Կադաք գիւղն անձ-
նասպանութիւն մ'եղաւ հետեւեալ
պարագաներով:

Թուրք երիտասարդ մը նոյն գե-
ղէն աղջկան մը նշանուած էր քանի
մ'ամենէն վեր: Այս օրերս աղջկան
հայրն յանկարծ երիտասարդին առ-
հարանցուն նուիրած ընծայներն ետ
կը զրկէ: Խեղճ երիտասարդն այս
անակնկալ իրողութեան պատճառն
հասկնալ ուղերով կիմանայ որ նըշա-
նածին հայրն աւելի հարուստ երի-
տասարդ մը գտնելով՝ աղջկին անոր
պիտի տար:

տուհի ամբաստանեալ վարդապետ մը չը գիտեմ ինչ կերպով կ'արեւանայ և ինչո՞ւն հետեւան ժողովը մէջ ամեն կ'ատանայ , և վարժարանի մը վերադառնալով ինչը կը վարէ , և խորհման իրեն քրեական յանցանք , ընտրելու ցանկէն դուրս կ'ընդ-
ախ , չեմ կրնար զսպել իմ արդարացի գայլովն , և կ'ափսոսամայն ժողովրդեան վրայ որ յետագէ՞մ ու փոստ գաղափար-
ներու հետ եկեղեցւոյ ազոյ բերող կը-
րծանկանները կ'ընտրուին . . . : Աւելի չեմ ուզեր խօսիլ այս կէտին վրայ , ար-
դէն Հայրենիքի գոյնն ինչ է գիտես , և կ'հասկնաս որ իրեն արժանի յոգեա-
ծաղիր մը գտեր է որ ինչպէս պատրի-
արքարանի անմեղ դրաղրին , նոյնպէս ա-
սոր անոր վրայ կ'արձակի անհիմն են-
թադրութիւններու վրայ , երբ այս այն
իր գոյնը չունի , իր ներքին նպատակին
չծառայել :

Յաւալի է արդարեւ որ նորընտիր Սըր-
բազան Պատրիարքն այսպիսի փաստա-
բաններ ունի : Ասոնց գովեստը թոյն մ'է որ
անպզտոյթն կ'ապանակէ , ափսոսմ'է որ
մարդուս թմբի կողմէ և ցնորական աշ-
խարհ մը կը տանի , ուր մարդ կերպէ
ինչ որ արթնութեան ատենն ունի թե-
րեւ մեծ խորհուրդներ իրադարձելու :
Կ'երեւի թէ Ս. Պատրիարքն այս խորհու-
րոց կատարման առաջին պայման համա-
րեց ընդհ. ժողովը մէջ համաձայնութիւնն ,
և ալ ու ձախ կողմի պարտաւորութիւնը
խնայելի հրաւիրեց և հաշտութեան յոր-
դորեց : Բայց հացն ու գինին չեն կարող
երկու տարրեր տարրեր չաղկապել , և
մէկ անուամբ միտելու և Ս. պատրիար-
քին երեւութեան հալելու ծուռ էր , միայն
թէ ուրիշ հալել մը չունենար : Ինչը հի-
ժողովին գրեթէ միահամուռ հաւանու-
թեամբ ընտրեցաւ , ուստի իր ամբողջ ա-
ւելի ամբաստանութեան համար առ այժմ
ոչեք չունենէր երկու կողմն ալ իրեն կա-
պել , եթէ կապել էր միաբնոյ և ոչ իրա-
ւունք , համամտութիւն մը գոյացնելու
շանտ այն տեղ ուր զանազան խնդիրներ
զանազան կարծիք պիտի բերէին վիճա-
բանութեամբ : Միայն ատենապետին զան-
գակին դործն է ի կարգ հրաւիրել անոնք
որ անկարգ կերպով կ'ընտրուէին և ի-
րար կ'ընդամանէն Բայց Յուլիան զան-
գակն ալ երկնազոյն նորընտիր ատենա-
պետին ձեռքէն ընկաւ , իր միակ զէնքն ,
և պուլկան չունեցաւ այն արտութիւնն
որով ուրիշ կերպ մեծ պուլկա մը՝ 1868ին
կատաղի ժողովրդեան մը կոշտակները խա-
ղաղուց և իր ընկնին ուղեւոր հրացան-
ներուն կրակը մարեց իր վեճ և ճարտա-
սան ձայնովը՝ Յրանայի Աղղիւն ժողո-
վին մէջ :

Հեղինակ Լեւոն

ԱՐԿԱՆՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ

. . . խմբագրութեան խախտումներ
ապական լրագրող :

Արմաշի վանից Բոյ ամառը իր
յունիսի տետրը , իբր լէ Կ. Պօլսէն
գրուած թղթակցութիւն մի հրա-
տարակամ է : Թղթակցի Ստեփա-
նէ կեղծ անունն տակ ծածկուած
կերեւի թէ իրեն բանը որքան է
բարձր ազգային իրողութիւնը խե-
ղաթիւրելով հրապարակ հանել հան-
ութեան սիրելի և նրին շահերուն
սլաշապան ազգասէլ անձանց վրայ
չարախօսութիւնը և խարդախ ազ-
նարկութիւնը ընել առաւել քան
զայս ոչինչ տեսած ինչ նորա ցոյ-
ժում հրատարակած նամակաց մէջ :
Ստեփանէն վերջին նամակը (տես
Բոյ , տետր վերջերի երես 1) միւս-
ներէն աւելի չարախօսութեամբ և
չարամտութեամբ լինելով , հարկ
կը համարեմ բանագատութեան ձե-
ւով մի քանի նկարողութիւն , քան
թէ այդ նամակի և թէ Բուսոյ խըմ-
բագրութեան վրայ : Միջանկեալ
կերպով կը ծանոցանամ որ մի քա-
նի բարեկամներ կը հաւատան մեզ
թէ , ինչպէս որեւք ևս վաղուց կա-
կոծած եմք , այդ Ստեփանէն նոյն

ինքն Արմաշի Գեր. վանահայրն է , որ
Բուսոյ մէջ հայորդուած տեղեկու-
թեանց յաջա ընթերցողաց առաւել
կարեւորութիւն մը տալու և զինքը
չքմեղ կացուցանելու համար , իբր
Կ. Պօլսէն գրուած կը հրատարակէ :
Ս. քա մանր պարագաներ են , բայց
քննա զգալու չեն բերել մի խմբագ-
րութեան , մանաւանդ կրօնական ,
իմաստասիրական և բանասիրական
խմբագրութեան :

Պ. Ստեփանէն գլխաւոր Աշտարա-
կեցի կաթողիկոսը , հայրենեաց այդ-
մեծ պաշտպանը , հիւրիմեան Սրբա-
զան , Բրիտանիական վարդապետու-
թեան այդ ճշմարիտ աշակերտը , ըզ-
Փոխանորդ Հայր Տ. Մկրեան , այդ
գործունեաց և ազգասէր եկեղեցա-
կանը , զՄասիս և զԱրեւելեան Մա-
մուլ նենգուպատիր խօսքերով և կը-
ծու ակնարկութեամբ անպատուելի
յետոյ , կանցնի Պ. Միսայ Զերադ գը-
րագէտին և ի. Սրբաճի բանա-
կընդուն , առանց դիտել տալու ըն-
թերցողին թէ հանգուցեալ Նիկողոս
եպիսկոպոսին անհաշտ թշնամիներն
ինչպէս այժմ՝ միայն անձնական նը-
կատուութեամբ և ատելութեամբ
պաշտպանել կը նկրտին դիւ . թէ Ա.
մեն . Պատրիարք Սրբազան Ներսէս
Արքեպիսկոպոսի ուխտեալ թշնամիներ-
ը , որք Նորին Սրբազնութեան իշխա-
նութեամբ ժամանակ թագուն և յայտ-
նի դաւերով այնպիսի ջանացած են ,
Սրբազնութիւնը դաւառէն հեռու-
ցուցել , բարեկարգութեանցը խոչը-
դառ լինել , և այլն և այլն (ինչպէս որ
Նիկիոմիդացի մի քանի նամակագիրք
հրատարակեցին Մասիսի միջոցաւ) ,
ինչպէս այժմ փաղաքական խօսքերով
իւրեանց նախկին յանցանքը քաւել
լըծանան , առանց այս կէտերը դիտել
տալու՝ նախ Պ. Զերադի և ի. Սրբաճի
նամակուցին նկատմամբ գրածին ,
երկրորդ . Լոյս Հանդիսին հրատարա-
կութեան նկատմամբ գրածին , եւ
այսու Բուսոյ մի և նոյն տետրին մէջ
տեսնուած մի բանագրութեան վե-
րայ պիտի խօսիմ :

Ստեփանէ՛ , յանձն Պ. Զերադի՛ Շահ-
նազարեան վարժարանին ալ քար մի
նետելէ յետոյ , տգիտաբար Զերադի
վերայ կը յորձանի : Պարզեմ հեզ-
նական կերպով զՁեռքդ գրագէտ
կանուանէ . սակայն վստահ եմ որ Պ.
Զերադ՝ Ստեփանէն շատ դերագանց
գրագէտ մի է . ամենայն վստահու-
թեամբ կըսեմ որ ոչ Ստեփանէն , ոչ
ալ Շորա թղթակցութեանց հրատա-
րակիչ միտքաւորութիւնը Զերադի չափ
ազգային լեզուի , օտար լեզուաց ,
ընդհանուր գրականութեան և ընդ-
հանուր պատմութեան վերայ տեղե-
կութիւն ունին : Մի հեղինակի հա-
մար , որ գրած է Աղթնք ուսանու-
ղաց , Յիշատակ , Ուսում վերնագիր-
ներով բանաստեղծութիւնը , Մե-
ծագործութիւն , Պերճախօսութիւն
և Մահի պատիւ վերնագիրներով ճա-
ռերը , որոց նմանէ՛ հինգ տարուան
Բոյսերու մէջ բնաւ տեսնուած չեն ,
և որք ամբողջ հինգ տարուան Բոյ-
սէ աւելի արժէք ունին , այդպիսի
հեղինակի մը համար ըսել թէ « իւր
ազգի լեզուին համարութիւն չունի »
և « թէ աւելի ազգի է որ երթայ
ուղղական բառէն դարձեալ սկսի » ,
բացարձակ տգիտութիւն և ազիտու-
թիւն է : Ստեփանէն , եթէ կարող
էր և եթէ չոր դիտում մի չունէր ,
աւելի լաւ և օգտակար գործ մի տե-
սած կըլինէր թէ իւր նկատմանքն
ու գիտողութիւնը գրէր Պ. Զերա-
դի ուղղախօսութեան վերայ , օրինա-
ւոր բանագրութեամբ :

Ստեփանէն Լոյս Հանդիսին հրա-
տարակութիւնը ծանուցանելով կըսէ՝

« Սա աւետիսն ալ կուտամ ձեզ՝ թէ
Արժանապատիւ (եկեղեցական մը՝
« Լոյս » խորագրով տետրակ մը կը հը-
րատարակէ տանն հինգ օրն անգամ
մի : Ոմանք այս պարբերականին
թուղթը նիւթէն՝ և տպագրութիւն-
նը շարագրութեան նախաձեռնար գը-
տան : Այս տղերք պարտնակող
տետրին վերջն ալ Լոյսի հրատարա-
կութիւնը ծանուցանող մանաւոր
ծանուցում մի ալ կար : Բուսոյ խըմ-
բագրութիւնը մին կամ միւսն հրա-
տարակելու չէր . Ստեփանէն գրա-
ծին հետ այդ ծանուցումը , կամ ծա-
նուցման հետ Ստեփանէն գրածը
հրատարակելով՝ պարզապէս ճիգու-
թական գործ մի կատարած է , հա-
կառակ Բրիտանիական եղբայրսի-
րութեան : Խմբագրութիւնը պար-
տաւոր էր կամ միայն ծանուցումով
չատանալ , կամ՝ բանագրութեան
պահանջով կերպով գրել իւր նկատ-
մանը , այդ հանդիսին վերայ թուղ-
թի և տպագրութեան վերայ խօսե-
լով՝ կոչուած եմք այդպիսի ձեռ-
նարկ մի անարգել՝ բարի մարդու
գործ չէ : Բոյսը տարին երեք անգամ ,
1864ին հաւաքին տետրով այսպէս կը
խօսի իւր նկատմամբ . « Ենթ որք եւ-
նող աղայի մը դեղեւուն օտնփոխնե-
րը հաստատուելու համար անաշառ
և ճիշդ դատաքնութեան աւելի սի-
րալիլ յորդորանաց պէտք ունի . այս
նկատմամբ մեծ փառհաւթիւն ունիք
Աղղիս բարեկարգութեան որ մեր այս
առաջին քայլափոխին մէջ զմեզ մի-
այն քաջաբերելու մտադիր կըլլայ ,
կըսելով՝ ոչ թէ մեր տկար կարողու-
թիւնը , այլ սրտերնուս բաղձանքը ,
որ է մեր ապարդիւն աշխատութիւ-
նը նուիրել յօգուտ Սրբոյ եկեղեցւոյ
և լրութեան Աղղիս : Թէ և մեք այս
գաղափարին համափառ չեմք , այլ
մանաւանդ թէ ճանչելով բանագրա-
տութեան օգտակարութիւնը , ամեն
նոր հրատարակութեանց համար ա-
նաշառ բանագրութիւն կը պահան-
ջեմք , սակայն Բոյս , հաւատարիմ
դանուելով իրկնաւոր վարդապետին
Յիսուսի « Զորմիսնգամ՝ կամ թէ
արտոցեն ձեզ մարդիկ , այնպէս և
դուք արարէք նոցա » , իւր խնդ-
րածը ուրիշով վերայ կատարելու
էր , նկատելով որ Լուսոյ առաջին
տետրակը միայն աչքի առաւ ունե-
նալով գրուած է Ստեփանէն գրա-
ծը , նկատելով որ Լուսոյ բաղձանքն
այ՝ իւր աշխատութիւնը Ս. Եկե-
ղեցւոյ և Աղղիս լրութեան օգտին
նուիրելն է , նկատելով որ Լոյսը մէկ
անձի մի խմբագրութեամբ և ծախ-
իւք կը հրատարակի , չունենալով մա-
նուոր տպարան , « պատրաստ հաց ,
պատրաստ ջուր » :

Եթէ Բոյս իւր գաղափարը փո-
խած է , հաւանականաբար ընդու-
նած պիտի լինի թէ անաշառ բանա-
գրութիւնը շատ օգտակար է մա-
նաւանդ մեր ազգին համար , հե-
տեաւար ըստ այնմ վարուելու էր :
Այդ անաշառ բանագրութեամբ
պիտի տեսնէինք որ Լոյսը Բոյսէն ա-
ւելի օգտակար գիրք մ'ունի ժողո-
վրդեան մէջ , իւր ժողովրդական
պարզ , դիւրըմբռնելի և օգտակար
գրութեանցով , մինչդեռ վերջինը ա-
նօգուտ թարգմանութեամբ , ան-
լի բանաստեղծութեամբ և ժողովրդ-
ական կենաց հետ առնչութիւն
չունեցող յօդուածներով և ոտու-
թեամբ յերկրեալ թղթակցութեամբ
կը լցունէ իւր թերթերը :

Բոյս հասարակ էր միայն Բրիտա-
նի պատուէրին . « Մի՛ դատիր , զի մի՛
դատիր » . և յիշաւի՝ եթէ Բոյս

* Ինչ կը նշանակէ եկեղեցականին
տետրը չապ :

դատէ , ինքն ալ պիտի դատուի որ-
պէս բանագրող , զոր ահա՛ դամ ա-
պացուցանել :

Հետեւեալ թուով

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՀԱՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քաղաք յ' Բարաքի պատմագրոց

Ի Ձեռն Տոբիւր Մորթմանայ

Արեւելագէտի

ՏԵՏՐԸ

Ամեն Հայ գրաւաճառաց քով կը
գտնուի : Գին մէկ քառորդ արծաթ
մէծիւ :

Ս. ՏՊԵՒ

ԹԱՅՆՈՒԹԻՒՆՔ ԵՄԵԿԵԼՈՅ

կամ

Պարտաւորութիւն Բրիտանիական
Ինքնի ժամանակաց հետ Բիւլ-
Եւրոպականաց Եւ ձիւնեան

ՏԵՏՐԸ

Բովանդակութիւն .— Մագական ,
հրապարակական եւ ըզձական ար-
ուեստք , Գաղտնիք , Խորհուրդ , Կո-
չումն ողոց , Երեւանէն , Սրբազան եւ
ժողովրդական ուրուստեակը , Մե-
քենայի խոսքիւն , Թուրքականութիւն ,
Հրապարակ , Կախարդութիւն , Գիշե-
րածողով վիկայ , Վիկայ , Գիւսպէք ,
Բեմք , Յուսուք , Մոգական օժու-
մը , Զրաւարտութեան , փիլիսոփայական
քար , Մոգիստականութիւն , Երեքա-
րակականութիւն եւ այլն եւ այլն :

Տետր առ տետր պիտի հրատա-
րակուի : Գին մէկ մի տետրին 40 վա-
րայ :

Կըմխուսի Գաղափարն եւ Յիշե-
կան գրաւաճառներն ի Կ. Պօլիս եւս եւ
Մարթնոսի Պարագան կամ լինի գը-
լուսը , եւ ամեն Հայ գրաւաճառաց
քով :

Ա. Տըպէյի ունի հետաքրքրաշարժ
գործն ամբողջ թարգմանուած ըլլա-
լով , միւս տետրերն եւս հետագ-
հետէ անյապաղ պիտի հրատարակ-
ուին :

ԾԱՆՈԹՅՈՒՆ

Հիւստ եւ փորձ հայկարան մը շա-
բաթը երեք կէս օր պարտաւոր ժամա-
նակ ունենալով , պատրաստ է ազգա-
յին վարժարանի մը մէջ հայերէնի
տրամաբանութեան եւ հոգեբանու-
թեան դաստիարակութիւն ընել :

Ու զոգը լրագրոյ խմբագրէն կըր-
նայ տեղեկութիւն ստանալ :

ՀԱՐՈՒՐԻՆ 25 ՁԵՂԶ

ՄԻՆԸՍԵՐԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՅ

ՆՈՐԱՆՈՒՄ

ԱՐԿԱՆՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ

Ս. Մ. Միսայեան եւ ընկերը պա-
տիւ կը համարին ծանուցանել արգոյ
հոտարակութեան , որ իրենց « Ամերիկ-
եան վաճառատուն » վերստին կա-
ռուցուելով մօտեւ քաղաքացաւ , եւ
սոյն առթիւ իրենց բոլոր վաճառ-
ները զիջում պիտի ծախուին սկսեալ
օգոստ . 8 20 Եւ մինչեւ 18 30 սկսեալ
բեր . ուստի հաւատարկութիւնը յոր-
գանօք կը հրաւիրուի այս պատահու-
թեան օգուտ քաղելու :

Կարի գործիք՝ Սոպա եւ երկաթ
խոցովակներու գիններն միայն հա-
լարին 10 զեղչ պիտի ըլլայ :

Բոլոր միւս վաճառաց գիններն
հարկերն 25 զեղչ պիտի ըլլայ :

Ամերիկեան վաճառատուն
ճամբ դարուսի Գալաթիա

Տ

